Հաստատված է
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի
գիտական խորհրդի 2017թ. նոյեմբերի 7-ի
N 1-11/17/2 որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ ՈՒԳԸ) ուսանողների միավորում է, որը ձևավորվում է գիտական գործունեության նկատմամբ հակվածություն ունեցող ուսանողներից՝ նպատակ հետապնդելով բարելավելու երիտասարդ հետազոտողների մասնագիտական պատրաստվածության որակը, պայմաններ ստեղծելու ստեղծագործական ակտիվության, գիտական գործունեության մեջ ուսանողների ինքնուրույնության զարգացման համար:

1.2. ՈՒԳԸ-ն համակարգող օղակ է, որը ուսանողների գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ գործունեություն է ծավալում բուհի ֆակուլտետներում, ամբիոններում, լաբորատորիաներում և այլ ստորաբաժանումներում:

1.3. ՈՒԳԸ վերակազմավորումը և (կամ) լուծարումը կատարվում է համալսարանի ռեկտորի հրամանով:

1.4. Իր գործունեության ընթացքում ՈՒԳԸ-ն առաջնորդվում է ՀՀ և ԱՀ օրենքներով, Շուշիի տեխնոլոգիական համալսարանի կանոնադրությամբ, ռեկտորի հրամաններով, գիտխորհրդի որոշումներով և սույն կանոնակարգով:

2. Կազմը և կառուցվածքը

2.1. ՈՒԳԸ գիտաժողովների միջև ընկած ժամանակահատվածներում ղեկավարվում է խորհրդի կողմից: Խորհրդի կազմի մեջ մտնում են նախագահը, գիտական ղեկավարը, ֆակուլտետային խորհուրդների նախագահները, գիտության բաժնի ղեկավարը: Խորհրդի աշխատանքները վերահսկում և համակարգում է համալսարանի գիտության գծով պրոռեկտորը:

2.2. ՈՒԳԸ խորհրդի նախագահը նշանակվում է բուհի հայցորդներից, մագիստրանտներից ուսանողներից: Խորհրդի կազմը, նախագահի և գիտական ղեկավարների թեկնածություններն առաջարկում, քննարկում և հաստատում է ռեկտորատը:

2.3. ՈՒԳԸ անդամ կարող է դառնալ համալսարանի յուրաքանչյուր ուսանող, ով ցանկանում է զբաղվել գիտությամբ, ունի բարձր առաջադիմություն և համապատասխան ամբիոնի երաշխավորությունը: ՈՒԳԸ անդամն իրավունք ունի մասնակցելու բոլոր միջոցառումներին, տեղեկատվություն ստանալու կառույցի գործունեության մասին:

2.4. ՈՒԳԸ ֆակուլտետային խորհրդի կազմը հաստատվում է ֆակուլտետի խորհրդի կողմից: ՈՒԳԸ Ֆակուլտետային խորհրդի կազմի մեջ ընդգրկվում են խորհրդի նախագահը, գիտական ղեկավարները, համապատասխան բազային ամբիոնների վարիչները, ուսանողական ֆակուլտետային խորհրդի նախագահը, գիտահետազոտական աշխատանքներին գործուն մասնակցություն ունեցող ուսանողները (հայցորդները,

մագիստրանտները), ինչպես նաև ֆակուլտետի ամբիոնների դասախոսներ: ՈւԳԸ ֆակուլտետային խորհրդի նախագահ կարող է նշանակվել տվյալ ֆակուլտետի ուսանողներից, հայցորդներից, մագիստրանտներից՝ 2 տարի ժամկետով:

2.5. ՈւԳԸ գիտաժողովները կազմակերպվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ, քան տարին մեկ անգամ՝ երկու փուլով: Առաջին փուլն անց է կացվում ֆակուլտետներում՝ ապրիլ ամսին: Առաջին փուլի կազմակերպման համար ուսումնական տարվա ընթացքում ՈւԳԸ ֆակուլտետային խորհուրդը համապատասխան ամբիոնների հետ միասին աշխատանքներ է կատարում թեմաների մշակման և ուսանողներին նշված գործունեության մեջ ընդգրկելու ուղղությամբ: Ամբիոնների կողմից մշակված թեմաների օրինակելի ցանկը նախ ներկայացվում է ուսանողներին, ապա համապատասխան ճշգրտումներ կատարելուց հետո՝ խորհրդի հաստատմանը: Միաժամանակ՝ յուրաքանչյուր ուսանողի համար նշանակվում է գիտական ղեկավար: Առաջին փուլի աշխատանքները կազմակերպում են ֆակուլտետային խորհուրդները, իսկ վերահսկումը՝ համալսարանի խորհուրդը:

2.6. ՈւԳԸ գիտաժողովի առաջին փուլում մրցանակային առաջին, երկրորդ և երրորդ տեղերը զբաղեցրած ուսանողներն իրավունք են ստանում մասնակցելու երկրորդ՝ համահամալսարանական փուլին: Մրցանակային տեղեր չզբաղեցրած ուսանողների ուսումնասիրությունները, որպես անհատական աշխատանք, կարող են գնահատվել և հաշվի առնվել համապատասխան առարկայի գծով՝ կրեդիտային համակարգով սովորողների համար: Երկրորդ փուլն անց է կացվում հոկտեմբեր ամսին: Ընդ որում, երկրորդ փուլին, բացի վերոնշյալ ուսանողներից, մասնակցում են նաև բոլոր մասնագիտությունների մագիստրանտները: Լավագույն աշխատանքների հեղինակներն ստանում են մրցանակներ, դրամական պարգևներ և զեկուցման թեզիսները հրատարակելու հնարավորություն:

3. ՈւԳԸ և ՈւԳԸ խորհրդի գործառույթները

ՈւԳԸ-ն ապահովում է համալսարանի ուսանողների մասնակցությունը հանրապետական, տարածքային, մարզային, քաղաքային և այլ միջոցառումների (գիտաժողովներ, սեմինարներ, օլիմպիադաներ, ցուցահանդեսներ):

ՈւԳԸ խորհուրդը

-կազմակերպում է ուսանողների գիտական գործունեությունը լուսաբանող ցուցահանդեսներ, մասնագիտական ուղղվածության մրցույթներ, առարկայական օլիմպիադաներ,

-կազմակերպում է ուսանողների գիտական գործունեության լուսաբանումը ամսագրերում, վերլուծում և ամփոփում է ուսանողների շրջանում ամբիոնների կատարած գիտահետազոտական աշխատանքների փորձը,

- կազմակերպում է գիտահետազոտական աշխատանքների փորձի փոխանակում և համագործակցություն տարբեր բուհերի ուսանողների միջև,

- օժանդակում է ուսանողների գիտական գործունեության կազմակերպմանն ու պրոպագանդմանը,

- օժանդակում է ուսանողական ամենամյա գիտաժողովների, խորհրդակցությունների, ժողովների կազմակերպմանը և ուսանողների գիտական աշխատանքների հրատարակմանը:

4. Իրավունքները և պարտականությունները

4.1. Նպատակների իրագործման համար ՈՒԳԸ խորհուրդն իրավունք ունի.

- տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին,
- գործունեություն ծավալել համալսարանի ուսանողական, գիտական և վարչական ստորաբաժանումների հետ համատեղ,
- համատեղ գործունեության կանխատեսման և համակարգման նպատակով հարցում կատարել, տեղեկատվություն ստանալ համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներից:

4.2. ՈՒԳԸ-ն պարտավոր է.

- պահպանել ՀՀ և ԱՀ օրենսդրությունը, Շուշիի տեխնոլոգիական համալսարանի կանոնադրությունը,
- իրականացնել սույն կանոնակարգով նախատեսված գործառույթները,
- սահմանված ժամկետում գործունեության ծրագիրը համաձայնեցնել ֆակուլտետային ստորաբաժանումների և ղեկավարության հետ, հաշվետվություն ներկայացնել ՈՒԳԸ աշխատանքի և հեռանկարային ծրագրերի մասին:

5. Փոխհարաբերությունները և կապերը

5.1.ՈՒԳԸ կապ է հաստատում ամբիոնների, գիտահետազոտական լաբորատորիաների և կենտրոնների հետ.

- ստանում է գիտահետազոտական ծրագրերին մասնակցելու առաջարկություններ, գիտահետազոտական միջոցառումների, ուսանողական գիտահետազոտական աշխատանքների նախագծեր,
- ներկայացնում է աշխատանքի համակարգմանն առնչվող ծրագիր:

5.2. Այլ կազմակերպությունների հետ.

- ստանում է տեղեկատվական և մեթոդական նյութեր,
- ներկայացնում է տեղեկատվական, գովազդային նյութեր:

6. Գործունեության կազմակերպումը

6.1. ՈՒԳԸ գործունեությունը՝ հանձինս խորհրդի, իրականացվում է միջոցառումների և աշխատանքների տարեկան ծրագրերի հիման վրա՝ համագործակցելով բուհի համապատասխան կառույցների հետ,

6.2. ՈՒԳԸ խորհրդի նախագահը կատարված աշխատանքների տարեկան հաշվետվությամբ հանդես է գալիս ամփոփ զեկույցով ՈՒԳԸ գիտաժողովում և Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդում:

Գիտական խորհրդի նախագահ Հ.Վ.Թոքմաջյան

Գիտական քարտուղար Ա.Ա.Առաքելյան